ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 536 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 110-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2023 թվականի փետրվարի 10-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնների ընդլայնում» ծրագրի մասին» N 110-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Տիգրան Ավիկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 06933724) 2025 թվականի հուլիսի 9-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «ԹՈՒՄՈ Մասիս» շենքի շինարարական աշխատանքների իրականացում՝ 17,325,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Մայք տրանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00257724) 2025 թվականի հունիսի 20-ին կնքված պայմանագրում նշված

գործարքը, որով նախատեսվում է 2025 թվականի հուլիսի 28-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում տրանսպորտային սուրհանդակային ծառայությունների մատուցում՝ 2,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Ռոմարի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 01253903) 2025 թվականի հուլիսի 15-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գլանային շերտավարագույրների ձեռքբերում՝ 475,350 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Կարմեն Թորոսյան Դրախտակի Անդրանիկի» անհատ ձեռնարկատերի հետ (ՀՎՀՀ՝ 54672522) 2025 թվականի հուլիսի 14-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մաքրող միջոցների ձեռքբերում՝ 310,700 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Գրանթ թորնթոն» փակ բաժնետիրական ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00040569) 2025 թվականի հուլիսի 2-ին կնքված՝ N AT-AU-076-25 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 4,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

13.08.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ